

85

5-76

8.15-2825
ՀԵՏՎԱԿԱՆ ՑՐԵՑ

* 5

ԵՐԵՎԵԿԻ



8.15-12825

3535-4·3

2018 - 42



2954-55

~~ՏԱՐԱ~~ ԵՐԵՄԵԱՆ

Ե-76

Այ

ԽՈՒԹՈՒ

ԹԵՎԿՈՅԻ ԹԵԳՈՒՏՀԵԲԵ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ



ՎԵՆԵՏԻԿ

— ՍՈՒՐԵ ԴԱԶԱՐ

—
1840



ԵՐԵՎԵՐԿ

ԱՆՈՒՆՈՎ

ԹԱՆԿՈՅԻ ԹԱԳՈՒՀԻԿ



ԳԼՈՒԽԱ ԵՐԵՎԵԿԻ

ԹԱԳՈՒՀԻԿ ու իր պալատը :

Այսաքան մէկ ծայրը ընդարձակ
տէրութիւն մը կայ որ Ճափոն կըսւի,
ու շատ կղզիներէ ձևացած է . առ
կղզիները զտան 1540ին մէկքանի Փոր-
թուղէզներ , որ փոթորիկով աս կող-
մերս քշուեր էին : Օդը առողջ ու
բարեխառն է , բայց քիչ մը ցուրտ .
Հողը ընդհանրապէս աղէկ բանեցու-
ցած է . իսկ բերքն է ոսկի , արծաթ ,
ցորեն , դարի , բրինձ , չայ , և ուրիշ

շատ ծառեր ու բոյսեր որ մեր երկիրը՝
ները չեն զբաւիր. բնակիչներուն մեծ
անձնութիւնն ալ խիստ անուանի է :

Աս երևելի երկիրը դանըւելէն եաւ
քը, քրիստոնեայ քարողիչներուն սիր
տը վառւեցաւ որ երթան զիրենք կոա
պաշտութենէ. քրիստոնէութիւն դար
ձընեն :

Աս ընդարձակ տէրութեան զլիսա
ւորը՝ ինքնազլուխ թագաւոր մըն է, որ
Քուսկո կըսւի : Խրմէ զատ Տայիրի
անունով զլիսաւոր մըն ալ կայ, որ
միայն հաւատքի բաներուն կըսառնը
ւի : Քուրմերը Պինց կըսւին, ու ժողո
վըրդեան առջելը մեծ պատիւ ունին :
Բայց Քրիստոսի սուրբ եկեղեցին ամ
մէն դժուարութիւն սիրով յանձն ա
ռաւ, որ ասանկ զեղեցիկ երկրի մը մէ
ջէն ալ կոապաշտութիւնը վերցընէ.
ասանկ բանի ձեռք զարնելը շատ դը
ժուար ու վտանգաւոր է, բայց Աս
տուծոյ շնորհքը ամէն բան կըդիւրա
ցընէ :

Ճափոնի կղզիներուն մէջ երևելի

է ։ Աիֆոն կղզին . ասոր իշխանն ալ
թագաւոր կըսւի , թէպէտ ինքն ալ
մեծ թագաւորին հրամանին տակն է :

Քրիստոնէութիւնը տասնըմբեցեւ
բորդ դարուն մէջ սկսաւ ծաղկիլ աս
կղզիիս մէջ . թագաւորը միշտ կոա-
ստաշտ մնաց , բայց քրիստոնէից հա-
ւատքին վրայ մեծ համարմունք ունէր ,
ու պատմութիւնը լսել կըսիրէր : Ու-
րովչետև ինքը բոլոր աշխարհքիս հա-
րըստութեամբը լեցուած էր , չէր հաս-
կընար որ՝ քանի որ Ճշմարտութիւնը
չէ ճանչցած , էն մեծ երջանկութենէն
զուրկ է : Իրեն սրտին մեծ ուրախու-
թեան պատճառն ալ իր թագուհին էր:
Ասիկայ ամեն արտաքին ձիրքերը ու
նենալէն ետքը՝ անանկ աղէկ դատ-
մունք , անանկ սուր յիշողութիւն , ու
անանկ պարկեշտ վեհանձնութիւն մըն
ալ ունէր , որ չէ թէ միայն թանկոյի ,
հապանակ բոլոր աշխարհիս թագու-
հին կըրնար ըլլար . ուստի իր հպա-
տակներն ալ մեծ սէր ու համարմունք
ունէին վրան :

Աս անուանի թագուհին մինակ կե-
նալ շատ կըսիրէր, և որչափ կըրնար նէ՝
ժողովրդեան մէջ քիչ կըտեսնըւէր :
Ետեն ատեն թագաւորը զինքը մեծա-
մեծ հանդէսներու կըտանէր . երբեմն
ալ իշխաններուն հետ տեսնըւիլ կու-
տար . բայց թագուհին աւելի կըսիրէր
ելլալ իր պարտէզներուն մէջ քիչ մը
մինակ պըտըտիլ, ու բնութեան գե-
ղեցկութիւններուն վրայ զմայլիլ : Օր
չեր անցնէր որ աղքատներուն ողոր-
մութիւն չիտար, ու իրեն հանդստու-
թենէն խեղճ մարդկանց ալ բաժին չի-
հանէր :

Թագաւորը իր թագուհիին առանձ
նութիւնը զուարձալի ընելու համար,
իրեն պալատը կարդէ դուրս զարդա-
րանքներով զարդարեր էր . մէջի եղած
հարստութիւնը անպատմելի : Ուրիշ
շատ բաներէն 'ի զատ՝ մէջը կար մէկ
դեղեցիկ պատկերք մը, որուն վրայ
քաշւած էր Ետօ քաղաքը ու բոլոր
Շափոնի թագաւորին սլալատը : Աս
քաղաքը տասւերկու մղոն շրջապատ

ունի : Դրսէն իրեք կարդ բերդի պէս
շինած պատ ունի խրամներով . երրոր
դին մէջը կընստի թագաւորը . ան ալ
երկու պղտի ամուր բերդով պատած
է . անոր ետեւը փառաւոր պարտէզէ :
Գանձատունը պալատին մէկ կողմն է
պղնձէ ծածքով ու երկըթէ դռներով ,
որ կարենայ կրակի դէմ դնել : Խոկ
Ետօ քաղաքը թառւքաւ գետին քովը
շինած է , որ հինգ բերնով նաւահան .
դըստին մէջ կըվազէ : Աս գետին վրայ
կամուրջ մը կայ որ խիստ մեծաշէն է .
և ասոր վրայէն կըչափեն ամմէն տեւ
դի հեռաւորութիւնը : Կըսեն թէ աս
պալատը ու քաղաքը մէկքանի ամսը .
ւան մէջ շինւեր լըմնցեր է . որով կի-
մացւի շինել տըւող թագաւորին հա-
րըստութիւնը :

Պատկերքին մէջ քաշւած կերևնար
մէկ սիրուն դաշտ մը, որուն մէջէն պըզ-
տի պղտի գետեր կանցնէին . բոլոր
դաշտին երեսը տեսակ տեսակ ծառե-
րով զարդարած . դաշտին մէջտեղն
աւ իրեք բաժնըւած լիո մը , որոնց

դլուխը լինչւան ամսկերը կը համնէր :

Լեռան տակը մեծ լիջ մը կերևնար ,
մէջը լեցուն պղտի կղզիներ , ու հա-
զարաւոր ձկներ : Աս ընէն ալ գեղե-
ցիկ դետ մը ելած՝ ծուռ ու մուռ վա-
ղուածքով կանցնէր կերթար դէպ ’ի
դուրս : Քաղաքը դետին հանդարս
քալած տեղը շինած էր . Էն բարձր
լեռան ծայրը կէս կլոր ձևով կերևնար
թաղաւորական պալատը . մէկալ եր-
կուքին վրայ ալ ուրիշ իշխաններուն
սպալատները կային :

Յաաղաւորին պալատը երթալու
համար պէտք էր մեծ ու լայն սան-
դուղէ մը ելլալ՝ որ լեռան քարերը փո-
րելով շինած էր . իսկ լեռան վրայ ար-
հեստով դաշտ մը ձևացուցած ու պա-
լատը հոն շինած էր . պալատին ալ
չորս դին յիսուն կանգուն բարձրու-
թեամբ ամուռ պատ մը քաշած էր :

Պալատին ներսի փառաւորութիւնն
ալ դրսինէն վար չէր մնար : Աան-
դուղները , սրահները , սենեակները և
ամմէն դարդերը զարմանալի մեծազոր-

ծութեամբ շինած էին . բայց ամենէն
աւելի աչքի դարնողը բրդաձև շէնքն
էր եօթը կարդ շինած՝ Զինու ճար-
տարապետութեամբ : Ամէն մէկ կար-
զը մէյմէկ ծածք ունէր՝ մէյմէկ գոյն
ներկած , անանկ որ արեւուն լոյսը շէն-
քին վրայ զարկած ատենը ծիրանի դօ-
տիի պէս կըփալիրէր : Աս բուրդին
վրայի ծայրը կապոյտ գունտ մը կար
ոսկեզօծ զարդերով զարդարած . ա-
նանկ կըփայլէր աս գունտը՝ որ մարդ
վրան հազիւ կըրնար նայիլ . բայց նայե-
լով ալ չէր կըշտանար :

Աս պատկերքին վրայ շատ անգամ
թագուհին կընայէր ու կըզմայլէր , և
մտքովը երանի կուտար ան պալատին
մէջ բնակող թագուհին : Բայց բոլոր
աս ունեցած հարստութիւնները թա-
գուհին ազնիւ սիրտը չէին կըրնար
կըշտացընել . կըտեսնար որ իր սիրտը
ուրիշ բանի մըն ալ կըփափաքի , թէ-
պէտ ինքն ալ չէր կըրնար հասկըցը-
նել . թէ որն է ան փափաքելի բանը :
Կնքը այնշափ երջանիկ էր , ու անով

ալ իր վիճակին վրայ դոհ չէր . ինչու
որ յայտնի կըտեսնար թէ աս աշ
խարհքիս բարիքը՝ հարստութիւնը մու
խի պէս կանցնին կերթան . մարդուս
աջքը կըխաբեն , բայց սիրտը չեն կըշ
տացըներ : Այսափ միայն աղեկ հաս
կըցեր էր որ աշխարհքիս մէջ ամէն
երջանկութենէն վեր է առաքինի ըլ
լալը , մոլութիւններէն ետ կենալը , և
ուրիշներուն բարիք ընելը . ու բոլոր
սրտանց աս բաններուս ետևէն կըլլար :



ԳԱՅԻՆ ԵՐԿՐՈՐԴ

Փառաւոր դարձ:

Ան ատենները քրիստոնեայ քարոզիչներուն ջանքը ու գերազանց առաջինութիւնները, ըսկսեր էին բոլոր տէրութեան մէջ տարածուիլ, ու անոնց ըրած հրաշքներուն ձայնը ինչպւան թաղուհոյն ականջը հասաւ: Թագաւորն ալաս բաներըս ուրիշներէն լսելով կըզարմանար, ու շատ անդամ՝ թաղուհոյն հետ ան բաներուն վրայ կըխօսէր. կամաց կամաց շատ մարդ քրիստոնեայ եղան, մանաւանդ հասարակ ժողովը զէն: Թագաւորը տեսաւ որ թաղուհին մեծ համար մունք ունի քրիստոնէից հաւատքին վրայ, բայց բանի տեղ չիդրաւ. որովհետեւ միտքը դրեր էր թէ անիկայ առանց իր հաւանութեանը բան չըներ:

Խակ թագուհին քանի որ կըլտէր
քարողիչներուն աւետարանական քա-
րոզութիւնը ու յայտնի հրաշքները ,
անդադար անոնց վրայ կըմտածէր , ու
ինքնիրեն կըսէր . « Այս կուռքերը ա-
մենեին հրաշք չեն դորձեր , մեր պոն-
ցերուն պատմածները սուտումուտ
բաներ են ժողովուրդը խարխըբելու
համար հնարած . պէտք է մէկ ուրիշ
Աստուած մը ըլլայ աս քարէ ու փայ-
տէ կուռքերէն վեր , որուն բոլոր
աշխարհք հնապանդին » :

Աս մտածմունքներով քիչ քիչ թա-
գուհոյն հոգւոյն աչուրները բացուե-
ցան . սկսաւ ատեն ատեն ցաւադին
սրտով աչքերը դէպ 'ի երկինք վեր-
ցընել ու հառաչելով ըսել . « Ո՛վ
ստեղծող բոլոր աշխարհքիս , երկինք
ու երկիր զքեղ կըզովեն , և քու մե-
ծութիւնդ ու ամենակարողութիւնդ
կըքարողեն . ա՛չ , ես ինչու զքեղ պի-
տի չի կարենամ ճանչնալ : Ինձի պէս
թագուհիէ մը շատ աւելի երջանիկ է
ան աղքատ կինը՝ որ քու պատուիրան-

ներդ կըսորվի, ու քու սորվեցուցած
սքանչելի հաւատքիդ պատմութիւն
ները կըլսէ : ‘Եայէ, կաղաչեմ, իմ՝
փափաքանացս, որով կըփափաքիմ՝
Ճշմարտութիւնը Ճանչնալու. ու դու
հանէ մոգէս ան ծուռ կարծիքները
որ ունիմ կուռքերուն վրայ : Իմացու
ինձի քու ով ըլլալդ, որ կարենամ
զքեղ պաշտել : Դու քրիստոնէից
հաւատքը մեծամեծ հրաշքներով աշ
խարհքիս չորս դին տարածեցիր,
ըսելէ թէ ան է Ճշմարիտ հաւատքը .
վասն զի դու ստութիւն չես կըրնար
սիրել. ահա իմ փնտոածս ալ Ճշմար-
տութիւնն է, ու անոր համար կըհա-
լիմ կըմաշիմ, թէ երբ պիտի կարե-
նամ փափաքիս հասնիլ, ու աս ան-
գիւտ գանձը ձեռք ձգել : Իրաւ որ
մարդս ինչ որ կըրնայ ունենալ աշ-
խարհքիս մէջ ես ամմէնն ալ ունիմ,
բայց ամենեին բան մը չունեցածի
պէս եմ. ուրեմն թէ որ քրիստոնեայ
ըլլալովս, կըրնամ աս փափաքիս հաս-
նիլ, ողորմէ ինձի, ու մի զրկեր զիս

աս շնորհքէն » : Ասոնք կըսէր ու
սիրտը ելած կուլար :

Աստուած իր անհուն ովզոմու-
թեամբը լսեց թաղուհւոյն աղաչան-
քը . անանկ շնորհքներ տուաւ իրեն
որ քրիստոնէ ըլլալու փափաքը քանի
դնաց աւելցաւ : Բայց ամմենէն ա-
ւելի յորդորուեցաւ ան դիպուածէն՝
որ թաղաւորը բերնովը պատմեց
իրեն :

* Տոսամ անունով երեելի խմաստուն
մարդ մը կար, որ Ճափոնի ու Չինու-
բոլոր դպրոցները մտեր ելեր էր, բո-
լոր տէրութեան մէջ անունը ելած էր .
ամմէն կողմերէն մարդիկ կուգային
իրեն խորհուրդ հարցընելու . ին-
չուան թաղաւորներն ու թաղուհի-
ներն իրենց պատիւ կըսեպէին՝ ա-
նոր հետ խօսակցութիւն ընելը : Աս-
տուծոյ նախախնամութիւնը այնպէս
բերաւ, որ աս մարդը քաղաքը դտուե-
ցաւ . հոն քրիստոնեայ քարոզիչ մը
կար, ուղեց Տոսամ անոր հետ խօ-
սիլ . ու մարդուն հողոյն վրայ խօսք

բացուեցաւ : Տոսամ սկսաւ ըսել,
թէ մարդուս հողին անմարմին բան
չէ, ուստի կը ընայ մեռնիլ կամ փճա-
նալ . ու աս ծուռ խօսքը հաստա-
տելու համար մէկմէկէ ծուռ ու ծի-
ծաղական պատճառներ բերաւ : Քա-
րողիչը մէկիկ մէկիկ Տոսամին բե-
րած պատճառներուն դէմ դրամ, ու
վերջը վերջը անանկ ըրաւ՝ որ ան ի-
մաստուն կարծուածը սկսաւ տարա-
կուսիլ իր հաւատքին վրայ : Քարո-
ղիչը աս տեսնելուն պէս սիրտ առաւ,
ու քրիստոնէութիւնը համարձակ բա-
ցարեց անոր, ու ան հեթանոս փի-
լիսոփային հողին վաստըկելու համար,
զանազան բաներ հարցուց մէկմէկէ
դժուար, անանկ որ՝ խելացի կար-
ծուած մարդուն բերանը ամենևին
խօսք չի մնաց : 】

Ասիկայ խելացի ու բարեսիրտ մարդ
ըլլալուն շուտով համոզեցաւ քրիս-
տոնէական հաւատքին Ճշմարտու-
թեանը, մէկդի դրաւ իր ծուռ հա-
ւատքը, Ճանչցաւ իրեն Ճշմարիտ



ստեղծողը, ու ետեւէ ինկաւ քրիստոնէութեան հարկաւոր բաները սորվելու : Քիչ ատենէն եաքը աշխարհը քիս ամմէն ունայնութիւնները մէկդի ձգեց մկրտուեցաւ, ու իրեն բարի վարքը օրինակ եղաւ նոր դարձող քրիստոնէներուն :

Մարդ չի կը բնար պատմել թէ Տոսամին դառնալը որչափ մարդու փրկութեան պատճառ եղաւ . եօթը ութը հարիւր հողի որ Տոսամին վարդապետութեանը հաւատացեր էին՝ իրեն քրիստոնեայ ըլլալը տեսնելով, իրենք ալ քրիստոսի դրօշակին տակը մտան : Անոնց պատճառովն ալ օր օրուան վրայ դարձողներն այնչափ շատցան՝ որ քրիստոնէից եկեղեցիները իրենց չէին բաւեր :

Աս բանիս ձայնը մէկէն տարածուեցաւ ամմէն տեղ, ամմէնքը կը սէին թէ, « Տոսամին պէս երևելի իմաստուն մարդն որ բոլոր աշխարհը իր խելքովը կը զարմացընէր, դարձեր քրիստոնեայ եղեր է, ըսել է թէ աշ-

խարհքիս վրայ քրիստոնէից հաւատաքին պէս շիտակ ու աղէկ հաւատք չէ զտած » : Թագաւորը աս բանս թաղուհւոյն պատմելով տեսաւ որ անիկայ արդէն ան մտքին վրայ է . վասն զի թաղուհւոյն երեսին զոյնը փոխուեցաւ , աչուրները լեցուեցան ու չի կրցաւ սրտին ցաւը պարարկել : Թագաւորը վախնալով որ յանկարծ վրան հիւանդութիւն մը չի դայ , դադրեցուց անկէց ետքը քրիստոնէից հաւատքին վրայ խօսիլը . ուրիշ պալատականներուն ալ սաստիկ ապըսապըրեց որ չըլլայ թէ այնպիսի լուրերով թաղուհւոյն տրտմութեան պատճառ ըլլան : Կարծէր թէ աս կերպով պիտի խափանէ Աստուծոյ շնորհքին ուժը : Իրաւցընէ ինչպէս կըրնայ մարդ Աստուծոյ կամացը դէմ կենալ , որ բոլոր մարդկանց սիրուանոր ձեռքն է , ու ինքն ուր որ կուղէ հոն կըդարձընէ :

ԳԼՈՒԽ ԵՐԲՈՐԴ

Ճշմարիտ բարեկամ:

ԽԱԳՈՒՀԻՈՅՆ Ճշմարիտ Աստուածը Ճանչնալու փափաքը օր օրի վրայ երթալով կաւելնար. ստեղ ստեղ Աստուածոյ աս ջերմեռանդ աղօթքները կըներ. « ԱՇ, Երբ պիտի հասնիմ սրտիս փափաքած բանին որ դու ես միայն՝ ով Աստուած քրիստոնէից. բայց ի՞նչպէս և ուր կըրնամ դանել զքեղ: Կըլսեմ որ Քրիստոս քու որ դիդ է, ու Աստուած և մարդ է՝ ու ինքն է որ քու կամքդ սորվեցուցեր է քրիստոնէից: Ես ալ կըհաւտամ աս քու որդւոյդ, ու զինքը ինձի Աստուած կըճանչնամ, կըյուսամ որ զինքը դանելով զքեղ ալ դտած կըլլամ. ուրեմն ինձի ալ տուր ան շնորհքն՝ որ Տոսամին տուիր: Յաէ որ ան մարդը

Ճշմարիտ դտաւ քու սորվեցուցած
հաւատքդ, ես ինչո՞ւ չի կարենամ պիտի
դտնել. դուն լուսաւորէ ուրեմն
իմխաւարած աչուըներս ալ:

Քանի որ ծածկել սկսան իրմէ¹
Ճշմարտութիւնը, թագուհին ալ աւելի
լի շատցուց աս աղօթքները. ու որ-
չափ որ անոնք զգուշութիւն կընէին,
որ ամենեին դիմացը խօսք չիբանան
քրիստոնէից վրայ, ինքը այնչափ կը-
ջանար նոր նոր բաներ իմանալու. ու
միտքը հաստատ դրաւ որ օր մը չէ
նէ օր մը դառնայ քրիստոնեայ ըլլայ,
թէպէտ և մեռնիլ ալ անոր համար
պէտք ըլլայ:

Ո՞իայն թէ ասանկ վտանգաւոր
բանի մէջ խոհեմութիւն ալ պէտք է
բանեցընել կըսէր, որ ուրիշները,
կասկած մը չառնեն մանաւանդ որ
իր ամմէն շարժմունքները դիառդ
կար, որ չըլլայ թէ երթայ քրիստո-
նեայ ըլլայ:

Քանի քանի անզամ թագուհոյն
մտքէն կանցնէր՝ թէ ինչպէս ընէ-

որ թաղաւորն ալ համոզէ քրիստոնէ ըլլալու, կամ դոնէ իրեն քրիստոնեայ ըլլալուն համար հրաման ուզէ. բայց օր մը անոր բերանը քիչ մը փնտռելուն պէս իմացաւ որ խաբուեր է. ալ մարդիկներէն բոլոր իր յոյսը կտրեց, ու սիրտը սկսաւ աւելի տակնուվրայ ըլլալ:

Օր մը երբոր նստեր Աստուծոյ առջև իր սրտին ցաւերը կլսայտնէր, յանկարծ Աստուած միաքը բան մը ձգեց: Աս իրեն այնպէս էր, ինչպէս թէ մէկ Ճամբորդ մը մութ ատեն ահապին անտառի մէջ Ճամբան կորսրնցուցած ու տարակուսած ատենը մէյմըն ալ բարերար մարդ մը հանդիպի ու շիտակ Ճամբան ցուցընէ իրեն: Ախտքը ինկածը աս էր որ, պալատին մէջը մէկ բարեկամ մը ունէր, անոր յայտնեմ ըսաւ իմ միտքս:

Աս բարեկամ ըսածը իշխանի մը խաթուն էր նոյն թաղաւորական ցեղէն, որ զրեթէ թաղուհոյն տարեկից էր, ու անոր հետ մեծցած:

Ասոնք մէկ մէկու վրայ սէր ու միաբանութիւն ունէին . մանաւանդ թաղուհին մեծ վստահութիւն ունէր իշխանուհւոյն վրայ , ու հետը շատ անդամ սրտակցելով կըխօսէր , ու զրեթէ միշտ քրիստոնէութեան վրայ էր խօսակցութիւննին , և երկուքն ալ համարմունք ունէին քրիստոնէից հաւատքին վրայ :

Ուստի թագուհին օր մը համարձակեցաւ իր բարեկամին սիրտ բանալու , և հասկըցուց թէ քրիստոնեայ ըլլալու մեծ փափաք ունի :

Իշխանուհին աս լսելուն պէս՝ աշխարհք իրեն եղաւ . « Ես ալ որչափ ատեն է որ աս բանիս կըփափագիմ ըստ , ես ալ զզուեր եմ մեր կուապաշտներուն հաւատքէն . ու ինչուան աս օրս միայն դրսուանց կըպաշտէի անոնք , բայց սրտանց մէկ ճշմարիտ Աստուած մը կըպաշտէի » : Ես երկուքին նոյն մտքին վրայ ըլլալնին , անանկ ուրախութիւն մը տուաւ իրենց սրտին , որ մէկմէկու ուսը ինկած

սկսան ուրախութեամբ արցունք թա-
փել ու իրարու սիրտ տալ : Խօսք
դրին մէջերնին որ ինչ ընեն շընեն՝
քրիստոնէութեան շնորհքին արժանի
ըլլան : Յռագուհին աղաչեց իր բա-
րեկամին որ երթայ քարողիչէ մը
տեղեկանայ , թէ քրիստոնէ ըլլալու
համար ինչ բան պէտք է . ան ալ
երթալու խօսք տուաւ :

Յռագուհին սիրտը կեփէր որ ժամ
մը առաջ իր փափաքին հասնի . անոր
համար աղօթքը ու բարեղործութիւն-
ները աւելի շատցուց : Կատ անզամ
իր սենեակը կըքաշուէր , ու իր բա-
րեկամին տուած Յիսուսի պատկեր-
քին դիմացը ինկած , « Բարերար
Կատուած , ես քու դրած օրէնքդ թէ-
պէտ և աղէկ չեմ ձանչնար , դու օդնէ
իմբարեկամիս որ կարենայ իմ փրկու-
թեանս համար աղէկ աշխատիլ , որ
ես իր ձեռքովը խալքսիմ իմ մոլորու-
թենէս : Իմ տէրս կուզէ արդեքք ըլ-
լալ իմ երջանկութեանս , բայց ատ
իշխանուհին կըսուսամ որ անոր ար-

դելքները ցրուէ , ու զիս Ճշմարտու-
թեան Ճամբան հանէ : Ինչուան աս
օրս բարեկամութեան յարդը այսչափ
չէի Ճանչցած . խօսք կուտամ ահա
բոլոր սրտովս քեզի ծառայելու , զքեզ
սիրելու , ինչուան որ արժանի ըլ-
լամ մկրտուիլ , ու սուրբ եկեղեցւոյ
զաւակ ըլլալ : Ուստի օգնէ ինծի .
քու շնորհքովդ ես ամմէն բան կըր-
նամ ընել , պատրաստ եմ համբերե-
լու ամմէն նեղութեան ինչ որ վրաս
դալու ըլլայ : Առանց զքեզ Ճանչնա-
լու ապրիլս ինծի մահ է : Դուն որ
աղքիւր ես ամենայն բարութեանց .
լոյս տուր ինծի ու ցըցուր՝ թէ ինչ
Ճամբով կըրնամ քեզի դալ ? :



ԳԱՐԵՎԱ ՉՈՐՅՈՒԴԻ

Մարիամ իշխանուհւոյն մկրտուիլը :

ԽԾԽԱՍՈՒՀԻՆ ուր որ ուզէր համարձակ կըքնար երթալ, ուստի ձեռքէն եկած բարիքը կըցածին չափ կընէր ամմենուն : Շատ անդամ կելլէր կերթար քաղաք ու տնանկ աղքատ ներուն բարիք կընէր չի կարծած տտեննին : Հետը իր աղախիններէն մէկը առած, ամմէն տեղ կըփնտոէր կըգանէր խեղճ մարդիկը, ու կըքաջալերէր զիրենք : Բոլոր քաղաքը՝ իր բարեգործութեան անունը ելած էր . թակաւորն ալ լսելով ըրած աղէկութիւնները, առատ ստակ կուտար իրեն որ ուզածին պէս բանեցընէ . անկէց ’ի զատ իրեն աղնուական կերպին համար՝ ինչ որ խնդրէր թագաւորէն՝ մէկէն հրաման կուտար :

Աս իրեն ստէալ ստէալ դուրս ելլեւ
ըւ առթովը դիւրաւ կըրնար քարու
զիչ մը գտնալ, առանց ուրիշի կաս
կած մը տալու . մանաւանդ որ թա
դաւորն ալ ան միջոցին հոն չէր :

Վերջապէս մէկ քարողիչ մը հան
դիպեցաւ . տեսածին պէս՝ հասկըցաւ
թէ ասիկայ Քրիստոսի ծառայից
մէկն է . մաքէն ըստ թէ « Ես ամե
նեին աս պատկառելի ու սրբակաց
կերպը չեմ տեսած մեր պոնցերուն
վրայ » : Խօսք բացաւ ասոր , ու տեղն
'ի տեղը պատմեց ինչ որ անցեր էր ի
րեն ու թագուհւոյն հետ . ու երենց
երկուքին ալ քրիստոնէ ըլլալու փա
փաքը յայտնեց . բոլոր աս բաներս
անանկ մէկ պարզսրտութեամբ ու ան
կեղծութեամբ պատմեց՝ որ քահա
նային ամենեին տարակուսելու պատ
ճառ չիմնաց :

Ուստի յանձն առաւ իրեն քրիստո
նէութեան օրէնքները սորվեցընելու ,
ու շատ աշխատանք պէտք չեղաւ :
Խշանուհին թագուհւոյն մէկ քանի

ունեցած տարակոյսներն ալ հարցուց
քարողիչին , և ուշադրութեամբ ու
պատկառանքով մտիկ ըրաւ քահա-
նային տուած լուծմունքները : Ետքը
ուրախութեամբ լեցուած պալատը
դարձաւ , ու բոլոր լսածները իր բա-
րեկամին պատմեց :

Հասաւ իրեն մկրտուելու երջանիկ
օրը . ալ անոր սրտին ուրախութիւնը
ուկրբնայ պատմել . անունը Մարիամ
դնել տուաւ ու ասանկով ինքզինքը
նուիրեց սուրբ Աստուածածնի , իր-
ըև առաջին պտուղ ան ցեղին : Մկրր-
տութենէն ետքը բոլորովին փոխուե-
ցաւ , Քրիստոսի սիրոյն կրակը սրտին
մէջ բորբոքեցաւ , ու նոր առաքեալ
մը դարձած , սկսաւ Ճշմարտութիւնը
քարողել և ուրիշները քրիստոնէու-
թեան դարձընել : Ծագուհին ասանկ
իրեն յանկարծ փոխուելուն վրայ զար-
մացած , հարցուց ու իմացաւ պատ-
ճառը՝ թէ քրիստոնէութեան շնորհ-
քին ուժն է ասիկայ . ու քանի որ կր-
տեսնէր իր բարեկամին աս նոր կեր-

պը , այնչափ աւելի փափաքը կըվա-
ռուէր քրիստոնէից հաւատքը ընդու-
նելու : « Երանի քրիստոնեաներուն ,
կըսէր , որ անանկ հաւատք մը ունին
որ բոլոր առաքինութիւն կըբղխէ :
Ա՛յս , երբ պիտի զայ ան օրը , որ ես
ալ վազեմ իյնամիմ Քրիստոսիս ոտքը՝
ըսելով , ես ալ քու զաւակդ եմ , որ
գեղիրդ եմ : Ա՛յս , Վարիամ նայէ ,
ետեէ եղիր որ ժամ մը առաջ իմ
փրկութեանս ալ պատճառ ըլլաս .
բայց ի՞նչպէս ընենք . երջանիկ ես
դուն . ուր էր թէ ես քու տեղդ ըւ-
լայի . ի՞նչ ուրախութեամբ աս ան-
ցաւոր զարդերս մէկէն վրայէս կըհա-
նէի , ու Յիսուսի տուած սուրբ ան-
արատ զգեստը կըհազնէի » : Ասոնք
ըսելով աղքիւրի պէս արցունք կըթա-
փէր . իր բարեկամն ալ ան միջոցին
կըջանար ձեռքէն եկածին չափ զինքը
միսիթարելու ու խօսք տալու , որ
զինքն ալ շուտով մկրտել տայ :

Վարիամ պահեց իր տուած խօս-
քը , ու կաշխատէր որ Ճար մը զտնէ
ՆՐԱՆՆԱԿ

Թագուհին մկրտել տալու . բայց աս
անդին զանձը թագուհին առաջ ու
ըիշներուն շահելուն պատճառ եղաւ :
Վարիամինքարողութէն թագուհւոյն
սպասաւորներէն շատը յորդորուեցան
քրիստոնեայ ըլլալու , ու անոր սուրբ
կենցաղավարութիւներէն ալ քրիստոնէ
ըլլալու պէտք եղած բաները տեսնաւ
լով սորվեցան ու մկրտուեցան . երևելի
իշխաններէն մէկն ալ որ միայն
հետաքրքրութեան համար դացեր էր
ասոնց մկրտուիլը տեսնալու , Ճանչ
ցաւ իր մոլորութիւնը ու դարձաւ
ինքն ալ քրիստոնէ եղաւ : Աս կերպով
Քրիստոսի թագաւորութիւնը մտաւ
տիրեց թագաւորական պալատին մէջ ,
որուն վրայ շատ ուրախացան՝ թէ
Վարիամ և թէ թագուհին :



ԳԼՈՒԽ ՀԻՄԳԵՐՈՐԴ

Թագուհւոյն քրիստոնէ ըլլալը:

ԽԱԳՈՒՅԻՆ որչափ որ մէկ կողմանէ կուրախանար Մարիամին հողիներ վաստըկելուն վրայ, մէկալ կողմանէ ալ այնչափ կըցաւէր, որ չի կըրնար ինքն ալ մասնակից ըլլալ անոնց երջանկութեանը։ Ըրդէն աշխարհիս ամմէն զուարձութիւններէն զզուեր էր. բայց պալատականաց մէջէն նոր դարձած քրիստոնէից ուրախութիւնն ու երջանկութիւնը տեսնելով, աւելի զզուեցաւ ամմէն երկրաւոր փառքէ։ Ընդադար կուլար կողբար ու սրտին ցաւը քանի կերթար կըշատնար։ Մարիամ աս տեսնալով վախցաւ, որ չոլայ թէ վրան հիւանդութիւն մը դայ. դնաց խօսեցաւ քահանային հետ, թէ ինչ ընեն որ թա-

դուհեոյն սիրտը հանգչեցընեն, ու
զինքն ալեկեղեցւոյ որդի ընեն : Որով
հետեւ կարելի բան չէր որ քահանան
պալատը երթայ . ինքը ամմէն պէտք
եղած բանը Վարիամին սորվեցուց ,
ու հրաման տուաւ որ ասոնք թագուհ
ւոյն համկըցընէ , ու զինքը միրտէ :

Վարիամսիրով և ուրախութեամբ
յանձն առաւ աս վտանգաւոր գործ
քը , թէպէտեւ դիտէր որ թագաւորը
իմանալու ըլլայ , թէ ան է իր թա
գուհին զլիսէն հանողը , բանը դէշ
է . բայց Քրիստոսի սէրը ամմէն բան
մոռցընել տուաւ իրեն : Երկիւղածու
թեամբ ու ջերմեռանդութեամբ ինչ
պէս սորվեցաւ քարոզէն՝ անանկ ալ
սորվեցուց իր բարեկամինքրիստոնէա
կան վարդապետութիւնը . ու երբոր
անիկայ չափաւոր կերպով պատրաս
տուեցաւ , իրեն ըստ , թէ վաղը
միրտութեանխորհուրդը կըկատարեմ
քու վրադ . աս խօսքը թագուհւոյն
սիրտը անսղատմելի ուրախութեամբ
լեցուց :

Երկրորդ օրը թաղուհին սրաանց
աղօթքներ ընելէն ետքը ծունկ չոքե-
ցաւ խաչելութեան առջել փառաւոր
սրահի մը մէջ՝ ու ինքղինքը Աստու-
ծոյ նուիրեց : Մարիամ եկաւ քաջա-
լերեց զինքը, ինչպէս որ ապսպրեր
էր քահանան, ու ետքը դողդըալով
լեցուց փրկական ջուրը անոր զլսուն
վրայ, ու մկրտեց յանուն Հօր և
Որդւոյ և Հոգւոյն սրբոյ : Մկրտու-
թիւնը ինչ զօրութիւն որ ցըցուցեր
էր Մարիամին վրայ, մէկէն թաղուհ-
ւոյն վրան ալ երեցուց . վասն զի
Հոգւով սրբով լեցուեցաւ, ու եղաւ
Ճմարիտ քրիստոնեայ :

Այսպէս հասաւ թաղուհին ան
երջանկութեանը, որուն այնչափ ա-
տենէն՝ իւվեր զիշեր ցորեկ լալով ողբա-
լով կրսպասէր . ալ անկէ ետքը Աս-
տուած իրեն էր, ինքն Աստուծոյ :
Ունեցած ուրախութիւնը այնչափ մեծ
էր որ բերնով չէր կրծնար պատել :
Տրտմութիւնն որ պատէր էր իր սիր-
ուը, մէկէն՝ ի մէկ փարատեցաւ . այն-

չափ փոխուեցաւ որ տեսնողները կարծէին , թէ իրաւցընէ նոր աշխարհք եկած է : Անունն ալ քահանային խորհուրդովը դրին Երանեակ , վասն զի թէ ուրիշները և թէ ինքը երանի կուտային իրեն , որ այսպիսի մեծ շնորհքի արժանի եղաւ : « Ես հիմայ չէ թէ մինակ պարզ թաղուհի եմ , կը սէր ուրախութեամբ , հապա ինքնակալին խաթունէն ալ վեր եմ , վասն զի երկնից թաղաւորին գուսար եղայ , ու օր մը յաւիտեանս յաւիտենից Աստուծոյ հետ պիտի վայելեմ ան թաղաւորութիւնը՝ որ անցնելիք չունի : Ի՞նչ փոխարէն պիտի ես կարենամ ընել ասանկ մէկ մեծ շնորհքի մը . բայց եթէ հաւատարմութեամբ իմ Փրկչիս ետևէն երթամ , ու ան առաքինութիւնները որ ինքը կըպատուիրէ սուրբ աւետարանին մէջ՝ կըբցածիս չափ կատարելու աշխատիմ , ու իմախտերուս հետ պատերազմիմ . ան ատենը միայն կըբնամ ըսել՝ թէ ես ալ քրիստոնէ եմ : Ա այ իմ զլխուս թէ որ

պարտքերս կատարելու անհող ըլլամ, մոռնամ մկրառւթե ատեն ըրած խոստ մունքներս, ու դառնամ նորէն զերի ըլլամ աս աշխարհքիս, ուսկից յայտնի հրաժարեցայ: Ասկից ետքը աշխարհքը ինձի հետ բան չունի. ասկէ ետքը ես պիտի գովեմ ու բարեբանեմ ինչուան վերջի շունչս զԱստուած՝ որ զիս խալըսեց մեղքերէս որ վայելեմ իրենքաղցը ազատութիւնը: Աշխարհքիս վրայ ես թագուհի կըսուիմ, բայց կուզեմ թագուհի ըլլալս ուրիշ կերպով մը իմացընել. իմ ժողովուրդս ախտերն են՝ անոնք պէտք կառավարեմ, անոնք պէտք է ծառայեցընեմ, ու թող չիտամոր իմ վրաս տիրեն»:

Ետքը Յիսուսի պատկերքին առջել ինկաւ ու սրտանց պաղատելով ըսաւ. «Ո՛վ ողորմած Աստուած, հաստատ պահէ զիս քու շնորհքիդ մէջ. լուսաւորէ իմ միտքս որ աղէկ ճանչնամ աս շնորհքին յարդը: Ես ձեռքէս եկածին չափ խօսք կուտամքեզի ծառայելու. ես զիս բոլորովին

քեզի կուտամ. իմ սիրտս միայն զքեղ
պիտի սիրէ. միտքս միայն զքեղ պիտի
մտածէ. ձայնս քեղ միայն պիտի օրհ-
նէ, մարմինս քեզի սուրբ ողջակէղպի-
տի ըլլայ. Տէր բարերար, դու ըն-
դունէ իմ զոհս »:



ԳԱՅԻՆ ՎԵՑԵՐՈՐԴ

ՎԵՀԱՆԱՃՆԱԿԱՆ ՊԻՄԱԼՈՐՈՒԹԻՒՆ :

ՊԱՏՄՈՒԹԵՆՔՆ ՊԻՄԵՆՔ ՈՐ ՄԱՐԻԱՄ ԽԾԱՅՆՈՒՀԻՆ ԹԱԳՈՒՀԻՆ ԱԼՐՈՒԵԼԻՆ ԵՄՔԸ, ԱԼ ԱւԵԼԻ ՍԻՐԵԼԻ Եղաւ ԱՍՄՈՒԾՈՅ. Ուստի իրեն զօրաւոր շնորհչքին ուժովը անանկ վեհանճնական մտածութիւն մը եկաւ իր սրտին, որ բոլոր աշխարհք զարմացուց : Երբոր մէկուն սիրտը ԱՍՄՈՒԾՈՅ սիրոյն կրակով վառուած է, որչափ մեծ առաքինութիւն ըլլայ շուտով ձեռք կըզարնէ ու կըկատարէ. ասանկ ալ ՄԱՐԻԱՄ ուխտ ըրաւ ԱՍՄՈՒԾՈՅ, որ ինքզինքը բոլորովին անոր նուիրէ, ու մէկզի թողու բոլոր աշխարհային մեծամեծ փառք պատիւ ու դուարձութիւններն որ կըրնար ունենալ : « Ես կոյս մը նալ կուզեմ ըսաւ օր մը Թագուհոյն,

ու բոլորովին զիս Աստուծոյ նուիւրել . միտքս ան է որ ասով իրեն աւելի սիրելի ըլլամ . մի կարծեր թէ աս մտածմունքը երևակայութիւն մըն է . չէ՞ ատանկ չէ . հապա սրտիս մէջ կրակ մը կայ որ զիս կըսորդորէ միայն Յիսուսի հարս ըլլալու » :

Թագուհին առջի բերան չէր զիւտեր թէ ինչ զուրցէ , բայց քիչ մը մտածելէն ետեւ հասկըցաւ , թէ ատ Աստուծոյ մամնաւոր ազգեցութիւնն է . « Քեզի ըսաւ ուրիշ բան չեմ կըրնար ըսել , բայց եթէ ուրախակից ըլլալ , և սիրտ տալ որ խոստմունքիդ վրայ հաստատ կենաս . միայն կաղաշեմ որ զիս աղօթքէ չի մոռնաս . վասն զի զիտեմ թէ ինչ որ Աստուծմէ պիտի խնդրեմ նէ՞ քու ձեռքովդ աւելի շուտով կըրնդունիմ » :

Վարիամ թագուհւոյնքովէն ելլելուն պէս , վազեց զնաց մէկէն յարդելի քահանային ալ իմացուց իր միտքը : Առորբ քահանան խել մը ատեն ափշած մնալէն ետքը ոտք ելաւ քաշուեւ

ցաւ մէկ սենեակ մը, ուր որ իր աղօթաքը կը կընէր . աղաչեց Աստուծոյ որ իւրեն լոյս տայ ասանկ դժուար նիւթի մէջ . ետքը դարձաւ եկաւ ու Վարիամին ըստ .

« Քու հաստատուն հաւատքիդ վրայ զարմացեր եմ, և յայտնի կը տեսնամ որ Աստուած քեզի համար մեծ բաներ պատրաստեր է . և իր փառքը շատցընելու համար քեզ ձեռք առեր է, ու կուզէ շատ կոապաշներ քեզմով դարձընել : Աս միշտ կոյս մնալու գիտաւորութիւնը միտքդ ձզողը Աստուած է . կուզէ որ ուրիշներն ալզքեղ տեսնալով գիւրաւ դառնան քրիստոնէ ըլլան : Ուստի ես ալ կըայտնեմ քեզի յանուն Յիսուսի Քրիստոսի, որ ատուխտը ընել ուզես նէ՝ ես կընդունիմ ու կը հաստատեմ » :

Ան ատենը Վարիամ դողդղալով ելաւ հետը աղօթարան մտաւ . ձեռքերն իրարու վրայ բերաւ, դարձուց աչուըները դէպ 'ի երկինք ու յստակ ձայնով ըրաւ աս փառաւոր երդումը,

թէ « Աշխարհքիս վրայ Յիսուսէն զատ ուրիշ փեսայ չունենամ » . Հրեշտակներն ալ մէկէն զրեցին վերը անմահութեան դրգին մէջ աս թանկղոյի իշխանուհւոյն խոստմունքը :

Ենկէ ետքը մէկէն նայեցաւ որ իր երջանկութե մէջ հաստատուի , անոր համար հրաժարեցաւ աշխարհքիս անբաներէն որ իրեն կըրնային արդելք մը ընել . հանեց ծախեց առջի ունեցած փառաւոր հաղուստները , ու առածստակը աղքատներուն բաժնեց . ասանկ ըրաւ մնացած զարդերն ալ , ու հաղաւ պարկեշտ միջակ զգեստ մը :

Քաղքին մէջ երբոր լսուեցաւ ասուխտը , ամմէնն ալ զարմացան . մանաւանդ ան մեծամեծներն որ իրեն փեսայ ըլլալու յոյս ունէին : Վարդ չիկար որ չիգովէր աս առաքինական խոստմունքը . ամմէնը մատով կըցուցընէին զինքը ու իրարու կըսէին . « Տեսէք տեսէք Քրիստոսի հարսը . տեսէք ան մեծ իշխանուհին , որ իր Աստուծոյն սիրուն համար ոտքի

տակ առաւ աշխարհքիս փառքն ու մեծ
ծութիւնը » :

Ամմէնէն աւելի թագուհին իր բարեկամին ըրած ուխտը սկսաւ ինչուան երկինք բարձրացընել, ու սրտին ուրախութիւնը չէր զիտէր թէ ինչ կերպով անոր յայտնէ . « Քու ըրած առաքինութեանդ վարձքը , արդէն աս աշխարհքիս վրայ ալ առատ կերպով կառնես , կըսէր . տուած բարի օրինակովդ չէ թէ միայն նոր դարձողները քրիստոնէութեամբ մէջ կըհաստատես , հապա ուրիշներուն ալպատճառ կըլլաս քրիստոնեայ ըլլալու : Ուր թողում որ ես չեմզիտեր ինչպէս շնորհակալըլլամ Աստուծոյ, որ ինծի քեզի պէս բարեկամմը տուաւ որ զիս մոլորութենէ խալըսէ : Աստուծած տայ որ մէկմէկէ չիբաժնուինք , ու մեր օրերը առաքինութեամբ ու ջերմեռանդութեամբ անցընենք :

ԳԱՐԻԽ ԵՕԹԵՍԵՐՈՐԴ

Թագաւորին հասնիլը :

Օ՛ մը թաղուհին ու իր բարեկամը Արքիամ ելան մէկաեղ պալատին մէջ սկսան քիչ մը ժուռ դալ. և տեսնալով անտառին գեղեցկութիւնը, բոյսերուն աղուորութիւնը, կըզմայլէին ու փառք կուտային Աստուծոյ : Ամմէն բան իրենց նոր կերենար . ինչու որ հոգինին իրենց փափաքին հասած էր :

Այս ալ յանկարծ ուրախութեան ձայն մը բրդաւ պալատին մէջ, թէ թաղաւորը կուզայ, եկաւ թաղաւորը. և իրաւցընէ ոսկւով ու ազնիւքարերով զարդարած կառքը որոտալով մը եկաւ մտաւ պալատին բակը. ու բոլոր պալատը ուրախութեան ու նուազպանի ձայներէն կըմնդար :

Թռագուշին ու Այարիամը մէկէն թա-
ղաւորին առջևն ելան . ան ատենը
բոլոր ձայները կտրեցան : Թռագաւո-
րը ինջաւ կառքէն, իշխանները թեր
մտան , ու կարծես թէ Աստուծոյ
պէս կուզէին պաշտել . բայց իրեն
դէմքը որ ուրիշ անդամ ուրախ կը-
լար , աս անդամ բոլորովին ժան-
տացեր էր , ու թաղուշւոյն երեսն ալ-
չէր ուզէր տեսնել : Իսկ երբոր ող-
ջութեամբ դառնալուն վրայ ուրախակ-
ցութիւն ըրաւ թագուշին , թաղա-
ւորը սոսկալի ձայնով մը կանչեց ա-
նոր դէմ . « Քաշէ ձայնդ ըսաւ ,
աչքս չիտեսնէ զքեզ . զնանստէ պա-
լատիս մէկ ծայրը , ու քու խաչե-
լեալդ պաշտէ . ես քեզի կըհասկըցը-
նեմ թէ ինչ ըսել է իմ թաղաւորու-
թեանս աստուածներն անարդելը » :
Եսքը աչուըները դարձուց Այարիամին
վրայ ու ըսաւ . « Դուն ալ դիմացէս
կորսըվէ , ու շնորհակալ եղիր որ ու-
րիշ մեծ պատիժ մը չեմ տար քեզի
իմ պալատիս մարդիկը խաբելուդ ու

մոլորցընելուդ համար . զնա՛ թաղուհէ .
ւոյն քովը : Լսեցէք ամմէնքդ ալ, ով
որ հոս չեղած ատենս ուրացաւ մեր
աստուածները, թող մէկդի ձդէ ատ
նոր կրօնքը, չէ նէ ամմէնքդ ալ կտոր
կտոր կընեմ» :

Ո՞վ կըրնայ պատմել, թէ ի՞նչպէս
ամմէնուն սիրտը ահով գողով լեցուե-
ցաւ աս դիպուածէս . մտածեցէք,
հանդարտ ու զուարթ օրէ մը ետքը,
իրիկուան դէմյանկարծակի մէկ փո-
թորիկ մը մէկ կարկուտ մը կայծակ
ներով պարտէզի մը վրայ իշնայ՝ ջարդէ
կոտրէ ամմէն բան տակն ու վրայ ընէ՝
տեսնողներուն սիրտը ի՞նչ կըլլայ . ա
սանկ եղաւ նաև բոլոր ան խեղճ պա-
լատականաց սիրտը, երբոր լսեցին
թագաւորին զուրցած խօսքերը : Ամ-
մէն մարդ վախէն կըդողար, որ չը-
լայ թէ իր զլխուն ալ փորձանք մը դայ.
մէկը չէր համարձակէր թագաւորին
դիմացը ելլելու, վասն զի դիտէին որ
իր չաստուածներուն եղած նախատա-
նաց վրէժը առնելու համար ամմէն չա-
րիք կընէ :

Խոկ երկու հարազատ քարեկանները, որ պատրաստ էին Աստուծոյ համար ամմեն բան քաշելու, փոթորիկը ամենեին բանի տեղ չիդրին. Հապա հանգիստ սրտով զլուխնին քաշեցին ելան դացին իրենց տեղը. կարծես թէ մէյմէկ բարձր ու անշարժ կաղնի ծառեր էին, որ փոթորիկը որչափ սաստիկ ալ ըլլայ, իրենց արմատը խախտել չի կըրնար: Յիշելով աւետարանին ան խօսքը, որ կըսէ Քրիստոս տէրն մեր, թէ « Առանց իմ հօրս կամացը ձեր զլիսէն մազ մըն ալ չինար » , անխոռով սրտով կընայէին թէ ծայրը ուր պիտի երթայ:

Բայց թագաւորը այնչափ բարկացած չէր՝ որչափ որ կըկարծէին: Քաղքին քրմապետը լսելով պալտին մէջի եղածները, մէկէն եկաւ թագաւորին հետ խօսեցաւ, ու խորհուրդ, տուաւ թէ « Թագուհին իր առջի հաւատքը դարձընելու համար մէկ հատիկ ճարը աս է՝ որ չարաշար պատժես զինքը, ըստ, ինչուան ԵՐԱՆԵՑԱԿ

խելքը զլուխը գայ, խոնարհի, իրյանց
ցանկը Ճանչնայ » : Թաղաւորը պա-
տասխան տուաւ, թէ « Խելմը ա-
տեն երեսը չի նայելս ալ բաւական է
դինքը մեղայի բերելու, որ գայ թո-
ղութիւն ուզէ ինձմէ, ըսելով, թէ
պարապ գտնուեցայ ու իմ բարեկա-
մէս խաբուեցայ » : Արդէն ալ միտքը
դրեր էր, թէ զղջալու ըլլայ նէ իրեն
շատ պատիւներ ընէ :



ԳԼՈՒԽ ԱՆԹԵՐԱՐԴ

Երկու բանտարկեալները :

ԵՐԱՆԵԱԿՆ ու ԱՄարիամը սիրով և ուրախութեամբ համբերեցին քաշած նեղութիւններնուն, ու շնորհակալ եղան Աստուծոյ, որ զիրենք արժանի ըրաւ այնչափ նեղութիւն քաշելու : « Աս մեր քաշածը բան մընէ, կըսէր թագուհին, Քրիստոսի զիմացը, որ մեզի համար մեռնիլ յանձն առաւ : Ուր էր, թէ թագաւորը զիս փուշերով պսակէր, ան ատեն համարձակ կըրնայի նոյել Յիսուսի վրայ, թէ ես ալքիչ մը իրեն նմանեցայ :

— Թռող կուզէ նէ զմեղ ալ խաչ հանէ, ըսաւ ԱՄարիամն ալ, ան ատեն մենք իրաւցընէ երջանիկ կըլլանք : Քրիստոնէն ոչ երբէք ճշմարիտ քրիստոնեայ կըլլայ, թէ որ նեղութիւն

չիքաշէ : Պիետք ըլլայ նէ արիւննիս
թափենք Քրիստոսի համար , միայն
թէ իրմէ ետ չի կենանք :

— Զէ , չէ , Աստուած պահէ » ,
ըստ Երանեակը :

Թռաղաւորը կըսպասէր որ երկուքն
ալ զան ոտքն իյնան , ու թողութիւն
ուզեն . բայց տեսնալով թէ եկող
դացող չիկայ , զղջացաւ հետերնին
այնչափ տաք խօսելուն վրայ . ուստի
մտքէն ըսելով թէ կարելի է որ վա-
խերնէն է չի զալնին , մարդ խրկեց
որ իմացընէ իրենց , թէ թագաւո-
րը պալատին մէջ անանկ հաւատք չու-
զէր , որ իր կամացը դէմ ըլլայ , ևս
առաւել չի կըրնար թող տալ որ իր
թագուհին ու թագաւորագուն կոյս
մը աս հաւատքին տէր ըլլան : Զի
կըրնար աչք զոցել ան բանին որ իր
պատւոյն կընայի . ինքը ինչուան հի-
մայ կըսուսար որ դուք դառնաք թո-
ղութիւն ուզէք ձեր սխալանաց .
ու պատրաստ է ինքը սիրով ներելու
և ձեր հնագանդութիւնը վարձատրե-

լու » : Գնաց մարդը քաղաքավայրութեամբ ու անուշութեամբ հետերնին խօսեցաւ , ու տալու պարզեներուն մէկ քանին ալ զուրցեց : ԾագուՀին հանդարտ ու ազնուական կերպով եւ կողին պատասխան տուաւ . « Ոսէ թագաւորին , թէ Արանեակը , (աս է իմ սուրբ մկրտութեան անունս) , ամ մէն կերպով հաւատարիմ է Երկանը , ու հնազանդ է անոր հրամաններուն , ու միշտ սիխի ըլլայ . բայց պարտը կան է աւելի հաւատարիմ ու հնազանդ ըլլալու թագաւորներուն թագաւորին որ է իր Աստուածը : Կատշնորհակալ է իր տալու մեծամեծ պարզեներուն , ու աղէկ կըճանչնայ էր կանը զթած սիրտը , բայց շատ աւելի վեր կըդնէ Աստուծոյ շնորհքն ու բարեկամութիւնը : Ինքը զինքը երանելի կըսեպէ , և ուրախ է Քրիստոս Ճանչնալուն վրայ , և զիշեր ցորեկ անդադար կաղաք կաղաչէ կըպաղատի Աստուծոյ՝ որ իր Երկանն ալ շնորհք տայ , աս նոր հաւատքիս քաղցրութիւնը

Ճանչնալու » : Արքիամն ալ նոյնպիւ
սի բաներ խօսեցաւ թաղաւորին խըր-
կած մարդուն հետ :

Ո՞վ կը բնայ պատմել թաղաւորին
զարմանքը, երբոր իմացաւ, թէ իր կի-
նը մկրտուեր է : Մէկէն սիրտը վկայ-
եց, թէ աս Արքիամին բանն է . երդ-
ւընցաւ որ անկէ վրէժն առնէ , իր
կնիկը զիսէ հանելուն համար : Բայց
բոլորովին յոյսը չի կտրեց . միտքը
գրաւ թէ սպառնալիքներով կը խո-
նարհեցընէ զիրենք : Անոր համար
նորէն մարդ խրկեց իմացընելու ի-
րենց , թէ թաղաւորը զձեզ կուզէ
տանջել ու չարչարել , ինչուան պէտք
ըլլայնէ սպառնելալ : Երկուքն ալ մէկ
բերան պատասխան տուին՝ թէ մեր ու
զածն ալ ան է :

Թաղաւորը բարկութենէն կատղե-
ցաւ . որչափ որ քրիստոնեայ կար պա-
լատին մէջ , անոնց ետևէն ինկաւ որ
դարձընէ , բայց ամմէնէն ալ նոյն պա-
տասխանը լսեց . վասն զի Երանեա-
կին ու Արքիամին աղօթքին ու բա-

թի օրինակին նայելով, սիրտ առին
ու խօսքերնուն վրայ հաստատ կե-
ցան :

Ան ատենը թագաւորին բարկու-
թեանը չափը լեցուեցաւ . մանաւանդ
երբոր իմացաւ թէ իր թագուհին է
եղեր առջի քրիստոնէ ըլլալ ուզողը :

Հրաման խրկեց Երանեակին որ
հանէ ձգէ ունեցած մեծութեան պա-
տիւները : Թագուհին սիրով հնա-
ղանդեցաւ հրամանին . « Ինծի հա-
մար մեծ պատիւ է ըստ , աս ան-
ցաւոր զարդերս վրայէս հանելը . մի-
թէ Յիսուսի վրայէն չի հանեցի՞ն
իր զգեսաները չարշարանաց ատեն ,
ու անոնց տեղը պատըռտած լաթ
մը չի հագուցի՞ն զինքը ծաղը ընելու
համար , բայց ինքը նոյնպէս թագա-
ւոր էր : Երնէկ ինծի , որ անոր կը-
նմանիմ . թող որ ես աս զգեսաները
կորսունցընելով ամենեին բան մը չեմ
կորսունցըներ . միթէ ես մկրտութեան
ատենս անմեղութեան զգեստը չի հա-
գայ : Քրիստոնէին Ճշմարիտ զարդը

աս է . իսկ մնացածը բոլոր ունայնութիւնն » :

Յօաղաւորը երբոր իմացաւ թէ իր կինը սիրով հրաժարեր է ունեցած պատիւներէն , աղսպըրեց որ անկեց ետքը ամենեին թաղուհւոյ անուն չի տան իրեն , հաղա ծաղը ընելու համար Երանեակ ըսեն : Մարիամն ալ իր ազնուականութեան պատեն դըր կեց , ու իրեն ցեղին նախատինքը կը կանչէր իրեն :

Իսկ Երանեակն ու Մարիամը հանգարտ սրտով իրարու կըսէին , թէ « Աենք անանկ անուններ ունինք հիմայ՝ որ բոլոր աշխարհիս պատոյ անուններէն վեր է : Աենք մկրառուեցանք յանուն սուրբ Երրորդութեան , և կը համբերենք Յիսուսի սուրբ անուանը համար . որ յանձն առաւ ըսուիլ նաև որդի հիւսան , ու թաղաւոր հրէից . մարդիկ որչափ մեզ նախատեն , Աստուծոյ առջեւ այնչափ կը իմառաւորուինք » :

Ինչուան ան օրը իրենք ալ թաղաւ

ւորին կերած կերակուրներէն կու-
տէին, բայց ետքը ան ալ վերջազու-
ցին, ու սկսան քիչ բան տալ միայն
ապրելու չափ: Թաղաւորը զուրցընել
տուաւ իրենց, թէ քրիստոնէ ըլլալով,
պէտք է Քրիստոսի պէս աղքատ ապ-
րիք, որ ամենելին թաղաւորի սեղան
չէ նստած: « Իրաւ է թաղաւորին
ըսածը ըսաւ Երանեակը, ես ու Վա-
րիամ զոհ ենք ձեր տուած կերակու-
րին. թէ որ թաղաւորը ուզէ նէ,
թող մեր կերակրին մէջ լեղի ու քա-
ցախ ալ խառնէ, մենք ուտելէն
չենք քաշուիր, որպէս զի աս բանիս
մէջն ալ Քրիստոսի նմանած ըլլանք»:

Թաղուհին ու Վարիամը տարին
դրին թաց ու մութ սենեակ մը, ուս-
կից դուրս ելլալու հրաման չունէին:
Պատուհանները զոցեցին որ պար-
տէզն ալ չի տեսնան, ու պահապան-
ներ զրին զրան առջևն, որ չըլլայ թէ
յանկարծ փախչին:

Անոնք կըծիծաղէին ըրած զգու-
շութիւններուն վրայ, « Ան աղատու-

թիւնը որ քրիստոնեան ունի սրտին.
մէջ, կըսէր Այարիամ, իր բանտն ալ
արքայութիւն կըփոխէ : Այիայն մեր
փափաքն ալ որ ունինք իրեն համար
համբերելու, մեր ամմէն ցաւը կըմոռ
ցընէ, ու անանկ ուրախութիւն կու^{տայ}
սրաերնուս որ բոլոր աշխարհք
պարտելու ըլլայինք չէինք կընար զըտ
նալ » :

Ասանկ աս սուրբ անձինքը ամմէն
բանէն իրենք զիրենք մխիթարելու
պատճառ մը կըդանային : Այիայն մէկ
բան մը կար որ զիրենք շատ կըվախ
ցընէր, այսինքն էր չըլլայ թէ օր մը
զիրենք մէկմէկէ զատեն . բայց դար
ձեալ Աստուծոյ սիրոյն համար ա
սոր ալ կըհամբերենք կըսէին . կը
զարմանային ալ թէ ինչուան հիմա
ինչպէս չեն մտածեր զիրենք մէկմէկէ
բաժնելու : « Թէ որ ուզեն ալ զմեղ
հանելասկէ տանել մէյմէկ զատ զատ
մութ ու հոտած տեղ դնել, մեր
սիրտը մէկմէկէ չեն կըրնար բաժնել,
կըսէր թագուհին : Աս սուրբ սէ-

ըլ մեր հաւատքին հետ կապուած
է, ու չի նմանիր ան սիրոյն՝ որ աշ-
խարհքիս մարդիկը իրենց շահուն ու
օդտին համար մէկմէկու կրցուցընեն.
մեր ունեցած սէրը Աստուծոյ պար-
գևն է » :

Ատեն ատեն փափաքնին կրշարժէր
նաև մէկմէկէ բաժնուելու, որ աւելի
վարձք վաստըկին . « Երբոր Աս-
տուած մեզի հետ է, ի՞նչ կրպակսի
մեզի, կըսէին իրարու. Յիսուս մի-
նակ չէր, երբոր զինքը մէկ դա-
տաստանէն մէկալը կըտանէին : Իր
սիրելի աշակերտները զինքը չի թո-
ղուցին չի փախան . իր բարեկամնե-
րէն որը կեցաւ քովը որ չարչարա-
նաց ատենը զինքը մխիթարէր : Ինչու
ուրեմն մնիք պիտի ցաւինք մէկմէկէ
բաժնուելնուս համար : Ամմէն բանի
պատրաստ ըլլանք, որ ատեն զալու
ըլլայնէ, չի խոռվինք : Մեծամեծ նե-
ղութիւններ քաշենք որ վարձքերնիս
ալ մեծ ըլլայ : Ան ատեն ճշմարիտ բա-
րեկամ կըլլանք Աստուծոյ, երբոր

բոլոր աշխարհք մեզ երեսէ թողու .
անոր մեր հետը ըլլալը միայն բաւական
է մեզի » :

Խսկ թաղաւորը, իր սրտին բարկու .
թիւնը ձեռքէն եկածին չափ կըթա .
փէր խեղջերուն վրայ , շատ անդամ՝
մտքէն անցաւ որ մէկմէկէ հեռացընէ
զիրենք . բայց քրիստոնէական սիրոյն
ու բարեկամութեան յարդը չիղիանա .
լուն՝ չէր կարծէր թէ ասիկայ մեծ
բան մը ըլլայ իրենց . անոր համար
թողուց որ մէկտեղ մնան :



ԳԱՐԻՎ ՎԵՅԵՐՈՒՄԻ

Հրաշալիք բժշկութիւն :

ԱՍՏՈՒԾՈՅ նախախնամութիւնը
շատ դարմանալիք բան է իր ընտրելոց
վրայ . անովք բաները անանկ դարձուց
որ ան երկու անմեղներուն չարչարան-
քը դադրեցաւ : Երանեակին զաւկը-
ներուն մէկը անանկ հիւանդացաւ ,
որ քիչ մնաց սլիտի մեռնէր : Թա-
զաւորը ուզեց որ թաղուհին ու Վա-
րիամը հոգ տանին տղուն վրայ : Վոռ-
ցաւ իրենց դէմ ունեցած ատելուիր ,
ու հրաման ալ տուաւ որ դան իրեն
երևնան : Եւ որովհետեւ ինքը ստէպ-
կերթար տղան տեսնալու , չի կրցաւ
բռնել ինքովինքը որ թաղուհւոյն հետ
ամենեին չի խօսէր . դարմացաւ ալ
անոր անփոփոխ հաւատարմութեանը
վրայ : Վայր մը ինչ պարագ որ ունի

իր զաւկին վրայ՝ ընելէն ետքը, Էր-
կանն ալ պէտք եղած պատիւն ու պատ-
կառանքը ընելէն չիպակսեցաւ։ Ոչ եր-
բէք բերնէն էրկանը սիրտը ծակելու
խօսք մը ելաւ։ Յօադաւորը տեսնելով
թագուհւոյն առաքինութիւնը՝ խելքը
պլուխը ժողվեց, ու մտմըտուքը ա-
ռաւ . մէկ կողմանէ ալ, իր մէկ հա-
տիկ տղան կորսունցընելու վախը ա-
նանկ տակին ու վրայ ըրաւ սիրտը, որ
անմիսիթար տրտմութեան մէջը ընկըզ-
մեցաւ։

Յօադուհին ալ աւելի հոգ տարաւ
զինքը միսիթարելու, ու այնչափ քա-
ջալերելու անուշ խօսքեր զուրցեց՝ որ
թագաւորին բարկութեան կրակը բո-
լորովին մարեցաւ։

Քաղքին երևելի բժիշկները կան-
չուեցան, խորհուրդ ըրին թագա-
ւորին առջելը, զանազան դեղեր որո-
շեցին, և ոչ մէկը օգուտ ըրաւ, և
տղան մեռնելու վրայ էր։ Ծատ չան-
ցաւ բժիշկները ձեռքերնին քաշեցին,
ըսին թէ քանի մը ժամէն ետքը

տղան կըմեռնի , ու ելան զացին :

Թխաղաւորը որ ամենեին մեռել տեսած չունէր , փակուեցաւ իր պալատը ու սկսաւ լալ ու ողբալ . տղունքով Երանեակէն ու Մարիամէն ուրիշ մարդ չիկար : Երկուքն ալ տղունք հոգւոյն փրկութիւնը կուղէին : « Սիրելի Մարիամ , դարձաւ ըսաւ թագուհին իր բարեկամին , դուն որ զիս արժանի ըրիր մկրտութեան սուրբ Խորհրդոյն , խեղճ անմեղ տղան պիտի մեռնի , ասիկայ ալ շուտ մը մկրտէ , արքայութեան որդի ընենք . ասանկով Աստուծոյ առջեւ բարեխօս մըն ալ աւելի կունենանք » :

Մարիամ ծունկ չոքեցաւ , քիչ մը մտածեց , յանձնեց մկրտուելու տղան Աստուծոյ . ետքը ելաւ առաւ ջուրը մկրտեց , ու տղան մէկէն 'ի մէկ առողջացաւ : Երեսը զոյն եկաւ , աչուըները բացաւ , սկսաւ ծիծաղիլ ու խնտալ : Աս Աստուծոյ հրաշքին վրայ զարմացած , մէկէն երկուքն ալ դեմին ինկան , Երանեակը տղան զիրկը

առած , աչքերը արցունքով լեցուն ,
փառք տուաւ , շնորհակալ եղաւ Աս-
տուծոյ , ասանկ անկարծելի ողորմու-
թեանը վրայ : Ուին դիտեր թէ ինչ-
պէս հասկըցնեն իրարու , իրենց զար-
մանքն և ուրախութիւնը : “ Յոյն ատեն
տղուն լեզուն ալ բացուեցաւ , սկսաւ
հայրիկ , մայրիկ կանչել :

Թռագուհին անպատմելի ուրախու-
թեամբ լեցուած՝ Մարիամին ըսաւ ,
“ Ուիտք է մէկէն երթանք իմացընենք
թագաւորին՝ Աստուծոյ մեղի ըրած
բարիքը ” : Այնչափ սաստիկ էր թա-
գուհոյն ուրախութիւնն որ տղուն
սովորական զգեստը հազցընելու ալ
մոռցաւ , ու շուտ մը մկրտութեան
ձերմակ զգեստովը առաւ տարաւ թա-
դաւորին :

Անիկայ տղուն կայտառութիւնը ,
զուարթութիւնը , առողջուիլը տեսա-
ծին պէս հասկըցաւ որ ըոնացեր է ,
ափշեցաւ մնաց . ու վրան նայելէն չէր
կըշտանար . երբոր երկընցուց ձեռվր-
ները տղան մօրը դիրիէն առնելու

Համար, ան ատեն թագուհին ինքզին-քըուրախութենէն մոռցածի պէս՝ դարձաւ ըստ թագաւորին.

« Քրիստոնէից մկրտութիւնն է որ աս քու սիրելի զաւակդը ըուընտցուց . աս մեր Վարիամին բարեգործութիւնն է՝ որ իմ աղաչանքովս մկրտեց զինքը : Քրիստոսի ամենակարող զօրութիւնը խալսեց աս տղան մահուան դոնէն , որ իր հօրը մէկ հատիկ ուրախութիւնն է . տես ուրեմն ով թագաւոր , թէ ինչպէս կըրնամ ես թողուլ ասանկ սուրբ հաւատք մը » :

Թագաւորին երեսին զոյնը նետեց , ու չէր զիտեր թէ ինչ զուրցէ : Տղան շարունակ հայրիկ մայրիկ ըսելու հետ էր . ու աս անմեղ տղուն զուրցած խօսքերը , անանկ աղջեցին թագաւորին սրտին , որ իրը թէ կուզէր ըսել , թէ հայրս մայրս պէտք է հաշտուին մէկմէկու հետ . մայրս իրաւունք ունի ասանկ սբ ու զեղեցիկ կրօնքի մը հաւատալու . աս հրաշքը քրիստոնէից հաւատքին իրաւ ըլլալուն նշանն է :

Ասոնք տեսնելով ալ չի դիմացաւ
թաղաւորին սիրտը, սկսաւ լալ. ոտք
ելաւ հաշտուեցաւ թաղուհոյն հետ.
նոյն ատենը մէկէն հանեց տռւաւ ի-
րեն առջի պատիւները. խոստացաւ որ
իրենց ալ չի դպչի. թող տայ որ հա-
մարձակ պաշտեն քրիստոնէից Աս-
տուածը. «Եոյնպէս Վարիամին ալ
դարձուց իրեն պատիւները. ու հրա-
ման տռւաւ՝ որ ուզածին չափ քրիս-
տոնէութիւնը քարոզէ. ուրիշ քրիս-
տոնեայ պալատականներն ալ ազատ
ըլան. մէկը իրենց չի դպչի:

Երբոր քաղքին մէջ աս հրաշքին
ձայնը ու թաղաւորին իր կնկանը
հետ հաշտուիլը տարածուեցաւ, սկը-
սան ըսել ամմէնքը՝ թէ ինչ մեծ Աս-
տուած է քրիստոնէից Աստուածը,
որ մեր աստուածներուն չի կրցած
բանը ինքն կընէ »: Ամմէնէն աւե-
լի ուրախացան քրիստոնեաները, ու
աւելի սիրտ առին իրենց սուրբ հա-
ւատքին վրայ ամուր կենալու:

ԳԼՈՒԽ ՏԵՄՍԵԲՈՐԴ

Հաւատք ու բարեգործութիւն :

Կնպատմելի էր անկեց ետքը
թագուհւոյն ու Այտրիամին ուրախու-
թիւնը, ինչու որ աս Աստուծմէ առած
շնորհքնին՝ չէ թէ միայն իրենց հա-
մար էր, հապա նաև ուրիշ քրիստո-
նեաններուն, որ համարձակ կը ընային
պահել Աստուծոյ պատուիրանքները :
Ուստի յորդորուեցան օր օրուան վրայ
աւելի աղեկ ու կատարեալ քրիստո-
նէ ըլլալու, և առաքինութեան Ճամ-
բուն մէջ առաջ երթալու :

Այտրիամ ուղածին չափ կը ընար
քարոզին քովն երթալ, ու զրեթէ
քովէն չէր բաժնուէր : Պալսար
դառնալուն պէս ալ բոլոր լսածնե-
րը թագուհւոյն մէկիկ մէկիկ կը պատ-
մէր : Ըատ անդամ երկուքնին զլուխ

դրլիսու տուած՝ կընստէին աղօթք
կընէին :

Ամմէն բանէն աւելի Յիսուսի չար-
չարանքը ու մահը քանի որ կըմատ-
ծէին, սրտերնին ուժ ու մնունդ կառ-
նէր :

Աստուածածնայ և սուրբերուն ալ-
լրած ջերմեւանգութիւննին շատ ըս-
քանչելի բաներ էին :

Երանեակը քարոզչին խորհրդովս
սկսաւ արտաքին ապաշխարութիւն-
ներ ալ ընել. միտքը դրած էր խաչ-
ելեալ Յիսուսին սիրոյն համար ա-
նանկ բաներ քաշելը իրեն պարտքն
է. իրեն մնար նէ ալ աւելի մեծ խըս-
տութիւններ կընէր. բայց քարոզիչը
կըչափաւորէր անոր եռանդը :

Թռագաւորը տեսնալով իր թագուհ-
ւոյն առաքինութիւնները ու տղոց վրայ
ցըցուցած խնամքը՝ կուրախանար: Խոկ
թագուհին դրսի կրթութեան կողմա-
նէ տղոց ամմէն բանին վրայ բոլոր
սրտանց աչք ունենալէն զատ՝ մասնա-
ւոր կերպով կրծանար իրենց սիրաը

կըթել, միտքը լուսաւորել, կիրքեր-նին սանձել, առաքինութեան համը առնել տալ։ Ծառ անդամ ալ Քրիս-տոսի վրայ կըխօսէր իրենց, ու ա-ղօթք և քրիստոնէական վարդապե-տութիւն կըսորվեցընէր . մէկ խօս-քով անանկ ըրաւ որ պզտիկուց վար-ժեցան բարեպաշտութեան։

Առաքինի Վարիամն ալ թագուհ-ւոյն կօգնէր ամմէն բանի մէջ, ու տը-ղաքը կըկրթէր։ Բայց թագուհին իր աղոցը պէս կըհողար նաև բոլոր իր հպատակները, մանաւանդ անոնք որ քրիստոնեայ եղեր էին։ Իր մէկ հատիկ զբոսանքն էր որբերուն ու որբեարի-ներուն այցելութիւնընել, միսիթարել, օգնել, կարօտութիւննին հոգալ։ Ա-նոնց աղոցը հագուստներ ալ կըշինէր, ու մէկուն մէկալին կըքածնէր. ու կը-խրատէր, որ օրերնին առանց մեղաց անցընեն։

Ծառ երեելի հարուստ խաթուն-ներ իրեն բարեգործութեանը հետևե-ցան . անանկ որ քիչ ատենի մէջ,

քաղքին փողոցներուն մէջ մուրացկան
չիմնաց :

Խսկ սուրբ քարոզիչը թէպէտ կու-
րախանար, բայց ամենեին չէր հպար-
տանար՝ որ Աստուած իր ձեռքովը ա-
սանիլ բարիք ըրաւ ան երկրին : Կատ-
անդամ կըսորգորէր զԱՄարիամն որ հո-
ղեոր ընթերցմունք ընելը ամենեին
ձեռքէ չի ձգէ, բայց Շափոնի լեզուով
զիրք չի դանուելուն, քարոզին աս
փափաքը չէր կըրնար կատարուիլ: Աս-
քուհոյն հետ, անիկայ ալ իր էրկա-
նը հաւանութեամբը ետեէ եղաւ սոր-
վեցաւ լատին ու ֆորթուգէզի լեզուն,
որ ետքը հաւատոյ էն հարկաւոր զըր-
քերը թարգմանէ : Աս բանս որչափ
որ դժուար էր նէ՝ Յիսուսի հաւաքը
տարածելու սէրը մոռցընել տուաւ
ան դժուարութիւնը, թագուհին ալ
մեծ քաջութեամբ ետեէ եղաւ :

Քարոզիչը Փորթուզալէն հետը
բերած զըրքերը անոր տուաւ : Սուրբ
զըքէն ետքը թագուհին կըսիրէր կար-

գալ Օռովմա Գևեմբացին : Քանիմը
թուղթ կարդալէն ետքը , շատ անդամ
կըդառնար կըսէր . « Աս զբքիս մէջ
ամմէն մարդ իրեն պէտք եղած խը-
րատները կըդանէ , ա՛չ , ի՞նչ հանգըս-
տութիւն է որ կուտայ մարդուս սըր-
տին , ի՞նչ ուրախութիւն կիմանայ մարդ
իր հոգւոյն մէջ , ի՞նչ սիրուն առաքի-
նութիւննէր կըսորվեցընէ մարդուս ,
ի՞նչ վարպետ կերպով մարդուս սիրաը
աշխարհէս կըհեռացընէ ու կառնէ
ինչուան առ Աստուած կըհանէ : Աս
զիրքը զարմանալի կերպով կըմխիթա-
րէ , կըյափշտակէ , ու Աստուծոյ սէրը
կըբորբոքէ մարդուս սրտին մէջ : Քրիս-
տոնէն ասոր խօսքերուն կըզմայլի ,
բայց հեթանոսն ալ առանց օդուտ մը
քաղելու չի կարդար » :

Ի՞նչ մեծ ուրախութեամբ կըկար-
դար թաղուհին ուրիշ զբքերն ալ՝
որ Քրիստոսի չարչարանաց վրայ կը-
խօսէին : Օրմը քանի մը բանի վրայ
մտածելու ատեն , դարձաւ ըսաւ Աւ-
րիամին . « Աս զբքերը մեծ մխիթա-

բանք են իմսրտիս . կարծես թէ կար-
գալու ատենս ես ալ Քրիստոսի քա-
շած չարչարանքները կըբաշեմ . բայց
ետքը մէկէն 'ի մէկ , անուշ զուար-
թութիւն մը կուգայ վրաս ու սիրաս
կըբացուի » :

Մեր սուրբ զրոց անունը Դեղարան
հոգւոյ դրեր էր . վասն զի անոր մէջ իր
հոգւոյն ամմէն պէտք եղած դեղը կը-
զըանէր : Յօէ որ տեղ մը խօսք մը չե-
չասկընար՝ մէկէն կը հարցընէր քարոզ-
չին : Խել մը խօսքեր ալ բերնուց սոր-
վեցաւ՝ իր օդախն և ուրիշին օդախն
համար :

Աւ չեմ կըրնար պատմել թէ Երա-
նեակը որչափ փոյթ ու ջանք ըրաւ
թանկոյին մէջ քրիստոնէութիւնը
տարածելու : Տասւերկու տարի միա-
կերպ բոլոր հոգւով աշխատեցաւ ճըշ-
մարտութիւնը սորվեցընելու : Քանի
անդամ , քանի քանի մարդիկ որ մա-
հապարա էին , իր զթութեամբն ու
միջնորդութեամբը թագաւորին բար-
կութենէն աղատեց : Իր մեծութիւնը

ուրիշներուն բարիք ընելու զործա-
ծեց . ու անանկ խելքով , ու անուշու-
թեամբ վարուեցաւ ամմէնուն հետ ,
որ թշնամի չունենալէն դատ , անթիւ
մարդիկ ալ իրեն բարի օրինակին հե-
տևեցան : Աստուծոյ տուած շնորհքը
միշտ աղէկի բանեցընելով , ամմէն բա-
նէ իրեն առաքինութիւն շահելու
վարձք վաստըկելու կաշխատէր : Իսո-
լոր իր կեանքը մեծութեան ու փափ-
կութեան մէջ անցուց , բայց սրտով
իրեն պէս աղքատ ու խոնարհ չի կար :



ԳԱՐԵՒՄ ՄԵՏԱՍՈՅԵՐԱՐԴԻ

Մարտիրոսութիւն :

ԵՐԲՈՐ Թաղուհին ամմէն բան
մոռցած՝ միայն իր հոգւոյն և ուրիշ-
ներուն փրկութեանը ետեւէ կըլլար,
մէյմըն ալյանկարծ մեծ խոռվութիւն
մը ելաւ Շափոնի մէջ : Թագաւորը
վախնալով որ չըլլայ թէ իր թաղուհ-
ւոյն զլսուն փորձանք մը զայ, (ինչու
որ զիաէր թէ անոր քրիստոնեայ ըլ-
լալուն համար մեծամեծներուն շատը
իրմէ ալ պաղեր էին,) անոր համար
խրկեց զինքը շուտ մը Օչաքա ըսուած-
քերդը . ինքն ալ առաւ իր զօրքը ու
զնաց ապստամբները նուաճելու :
Ամմէն փորձանքէ աղատ պահելու
համար, ուզեց որ մինակ թաղուհին
ան բերդը երթայ առանց հետն առ-
նելու տղաքն ու Մարիամը :

Կարդացողները թող մտածեն թա-
ղուհւոյն սրտին ցաւը որ ունեցաւ իր
սիրելի զաւկըներէն ու Վարիամէն
բաժնուելու ատենը . ի՞նչ ողք , ի՞նչ
լաց եղաւ երկու կողմէն նէ , ես չեմ
կըրնար պատմել : Տղաքը խօսք տուին
իրեն , թէ ինչ որ իրենց սորվեցուցեր է՝
հաստատ պահեն . ու հաւատքներնուն
վրայ պէտք ըլլայ նէ՝ պատրաստ են
սիրով արիւննին թափելու : Թռագու-
հին ալ օրհնեց զիրենք . յահճնեց Աս-
տուծոյ ու Աստուածածնայ պաշտպա-
նութեանը , ու իր սրտին ցաւերը խա-
չելութեան առջելը զուրցելէն ետքը՝
արտում տիսուր բաժնուեցաւ անոնց-
մէ դնաց (Օչաքա բերդը :

Հազիւ թէ ոտքը բերդէն ներս
դրաւ , ապստամբները շատ յաղթու-
թիւներ ըրած եկան պաշարեցին թա-
ղուհւոյն կեցած բերդը : Բերդապա-
հը որ թագաւորին հաւատարիմ պաշ-
տօնեաներէն մէկն էր , շատ ջանք
ըրաւ թշնամեաց յաղթելու , բայց
դժբաղդութեամբ թշնամիները իր հը-

նարքները պարապ հանելէն ետքը՝ բեր-
դին ալ տիրեցին։ Երբոր բոլոր քաղա-
քին մէջ վախը տիրեց, թշնամիներուն
ըրած յաղթութեան՝ ուրախութեան
ձայները թագուհին ալ սկսաւ լսել.
մէյմն ալ յանկարծ ներս մտաւ բեր-
դապահը երեսին զոյնը նետած ու
տրտմած։ Ո՞վ թագուհի, բաներնիս
գէշ է ըստ, թշնամիները բերդիս
տիրեցին ու բազմութեամբ պալատէն
ներս կըվազեն, զքեզ Աստուծոյ զոհ
կուզեն ընել։ Ես ձեռքէս եկածը ըրի
զքեզ խալսելու համար, բայց ի՞նչ
շահ, որ ամմէն ջանքս պարապ ելաւ։
Թագաւորը դիտէ եղեր աս բանս
որ հեռացուց զքեզ պալատէն, որ չի
տեսնաս ան զարհուրելի հանգէսը՝ ու-
րով թշնամիք քու տղաքդ իրենց հա-
ւագին չի դառնալուն համար կտոր
կտոր ըրին, ատ է եղեր զքեզ աս բեր-
դը խրկելուն պատճառը, ինքն աս ալ
ապսպըրեց ինձի որ.... Ես տեղս խեղճ
մարդուն լեզուն վախէն ու սրտին
ցաւէն կապուեցաւ, և չի կըրցաւ իր
խօսքը առաջ տանիւ։

թագուհին անուշութեամբ թևէն
բռնեց վեր վերցուց , ու առանց այ-
լայլելու , հրամայեց որ խօսքը առաջ
տանի լմնցընէ :

« Որովհետեւ հրամանքդ ասանկ
կուզես ովլ թագուհի , կը հնազան-
դիմքեղի , ըստ : Թագաւորը ապը-
սլըրեց ինձի որ իր թշնամիներուն դա-
դանական կատաղութենէն զքեզ խա-
լըսեմ : Ինքը աղէկ կը ճանչնայ զքեզ ,
և զիտէ իր վրայ ունեցած սէրդ .
բայց վախնալով որ չըլլայ թէ յան-
կարծ բարբարոսները քու հաւատքիդ
վրայ հաստատ կենալուդ համար մնաս-
մ' ընեն քեղի՝ ապսպըրեց որ ես . . . —
Հասկըցայ ըստ թագուհին , կուզես ը-
սել թէ իմ էրիկս կուզէ որ մեռնիմ՝
քան թէ անգութ բարբարոսներուն
ձեռքը իմնամ . իմուզածս ալան է : Եա-
հը զիս չի կը լնար վախցընել . քանի մը
տարի առաջ եմ մեռեր՝ քանի մը տարի
ետքը , հողս չէ : Ես պատրաստ եմ
ամմէն բան քաշելու . ու շնորհակալ
կը լլամ էրկանս՝ որ ինձի պատճառ

կըլլայ Քրիստոսի համար մեռնելու :
Այ երանի ինծի : Որուն մտքէն անց
ցեր էր որ Աստուած զիս աս շնորհքիս
ալ արժանի ընէ , որ իրեն սորվեցուց
ցած սուրբ հաւատքին համար մեռնիմ .
աշխարհքիս վրայ ասկէ մեծ ու
բախութիւն մարդ կըրնայ ունենալ :
Ով երկնաւոր փեսայ և տէր իմ Յա ,
եկու առ ընդունէ իմ հողիս որ ահա
քեզի պատրաստ զոհ կեցեր է : Քեզի
համար մեռնիլը իմ սրտիս մէկ հատիկ
ուրախութիւնն է . զքեզ յաւիտեանս
յաւիտենից զալ ժառանդելը իմ մէկ
հատիկ երջանկութիւնս է : Բոլոր սըր
տովս թողութիւն կուտամ էրկանս՝ և
անոնց որ ուզեր են ինծի վիաս մը հաս
ցընել : Կաղաչեմքեզի , որ գուն ալ
ինծի ներես : Տուր քու սուրբ շնորհքդ
իմ թագաւորիս ալ՝ որ զքեզ ճանչնայ ,
ու քեզի մինակ երկրապատթիւն ընէ :
Օգնէ անոնց որ քրիստոնէ եղան .
սկահէ ամէն փորձանքէ բարեպաշտ
Արքիամը , որ մօր պէս հոդ տանի
իմ զաւկըներուս վրայ , ու հաստատ

մնան քրիստոնէութեան մէջ :

Քարեպաշտ թաղուհին քիչ մը ա-
տեն լուռ կեցաւ, ու արցունքները անձ-
րեի պէս հրեշտակային երեսէն վար
կըվաղէին . ետքը ձեռքը երկնցուց ու
ըսաւ բերդապահ իշխանին . « Դուն
որ քու մարմնաւոր թաղաւորիդ հա-
մար այսչափ աշխատեցար . մեղք չէ
քեզի որ կոապաշտութեան մէջ մեռ-
նիս : Ափսոս չէ քեզի պէս խելացի
մարդուն՝ որ չի ճանչնաս քարէ փայտէ
կուռքերուն ստութիւնը : Հիմայ դուն
ալ՝ ի հարկէ պիտի մեռնիս ան արիւն-
կզակ բարբարոսներուն ձեռքէն : Ես
քու փրկութիւնդ կուղեմ . եկուր զքեղ
մկրտեմ . հաւատա՛ Քրիստոսի մեր
փրկչին , այսչափս հիմակու հիմայ
ճանչնալդ բաւական է քեզի համար,
մնացածը արքայութեան մէջ կիմանաս:
Փափաքէ սիրելի , մկրտութեան փա-
փաքէ , զղջա մեղքերուդ վրայ , խո-
նարհէ ճշմարիտ Աստուծոյ առջեր ,
և ահա կըփրկուիս , ու քեզի հետ
մէյտեղ կերթանք կըգտնենք մեր Աս-
տուծը :

Բերդապահը լուսաւորուեցաւ Առաջուծոյ ան շնորհքովը որ Խօղոսը Պօղոս առաքեալ ըրաւ . ծունկ չոքեցաւ , վերցուց ձեռքերը դէպ ՚ի . երկինք՝ թողութիւննգրեց իր մեղքերուն , ու բոլոր սրտանց ուզեց մկրտուիլ . ան միջոցին թաղուհին ներս մտաւ որ ջուր բերէ . դարձաւ թագուհին իր նամիշտներուն հետ ձեռքը աման մը առած , ու երեսը բոլորովին լուսաւորուած էր սքանչելի լուսով մը : « Կան ըրաւ աղախիններուն որ ծունկ չոքին . ինքն ալ ինկաւ խաչելութեան առջեը ու սկսաւ դողդղալով ըսել , « Իմ սիրելի քոյրերս՝ ահա հասաւ ատենը , հաւատքի համար մարտիրոս ըլլանք : Յիսուսի հաւատքին թշնամիները դուռը ձեռք առերեն . կատղած դայլերը պիտի մտնեն անմեղ գառանց մէջ . թէ որ մահուն վախը զմեզ կըխրտեցընէ նէ , յափատենական երջանկութիւնը պէտքէ քաջալերէ զմեզ : Յիսուս երկինքէն կեցեր կընայի մեր մարտիրոսութեանը վրայ . ինչպէս ատենով սրբոյն Ատեփաննոսի .

անոր պէս հիմա ալ զմեզ կըքաջալերէ,
անմահութեան պսակը ձեռքը բըռ
նած : Ա'հ, սիրտ առնենք ուրեմն,
հաւատքնիս դօրացընենք, մեր սէրը
բորբոքենք : Դուք սիրելի քոյրերս,
դուք բախտաւոր զտուեցաք որ սուրբ
մկրտութեան խորհրդին արժանի ե-
ղած էք. բայց ահա մեր եղբայրներէն
մէկը որ ինչուան առ օրս տղիտութե
խաւարին մէջ մոլորած կըքալէր, ինքն
ալ կուզէ դառնալ հաւատալ Քրիս-
տոսի. հիմա ես կըմկրտեմ՝ ղինքը, ա-
զօթք ըրէք ինծի հետ :

Եսքը ջերմեռանդ կերպով մընայե-
ցաւ գէալ ՚ի երկինք, « Ով Յիսուս,
ըսաւ լալով, ընդունէ զմեզ մշյմէկ
հաճոյական զոհի տեղ, որ քու սիրոյդ
համար կըմեռնինք՝ քեզի կընուիրենք
մեր կեանքը. հաճոյ ըլլայ քեզի մեր
մահը » : Ասոնք ըսելով ոտք ելաւ,
դողդղալով առաւ ջրին ամանը, մօտե-
ցաւ իշխանին քովը, ու ջուրը զլխէն
վար լեցուց ըսելով, « Ես Մկրտեմ
զքեզ Յանուն Հօր և Որդւոյ և Հո-
գւոյն սրբոյ » :


Ան միջոցին սոսկալի աղաղակ մը
բրդաւ պալատին մէջ, մէկէն՝ ի մէկ
անոնց կեցած տեղին դուռը բռնու-
թեամբ մը բացուեցաւ. բարբարոս-
ները ջահերով զէնքերով ներս թա-
փեցան, ու մէկ բերան կըկանչվըո-
տէին « Թագուհին կուղենք, թա-
գուհին »: Ան ատենը թագուհին ազ-
նուական կերպով մը դիմացնին ե-
լաւ. « Ահա հոս եմ, ըստ, զիս կու-
զէք, ահա կեցեր եմ զարկէք, աստուած
ձեզի թողութիւն տայ », ու սուրբ
զլուխը զլորեցաւ ինկաւ անգութ-
կուազաշներուն ոտքին տակ : Անով
դազանները կատաղի յաղթութիւն
մը ըրածիպէս ուրախութեամբ տե-
ղերնին դարձան :

Արքայութեան սուրբերուն թիւը
աւելցաւ, աշխարհս ալ ասանկով
զրկուեցաւ քանի մը առաքինի սուր-
բերէ :



ՑԱՆԿ ԳԼԽՈՅ

ԳԼ.	Ա.	Թագուհին ու իր պալատը	5
ԳԼ.	Բ.	Փառաւոր դարձ	13
ԳԼ.	Գ.	Ճշմարիա բարեկամ	20
ԳԼ.	Դ.	Մարիամ իշխանուհոյն մկրտուիլը	26
ԳԼ.	Ե.	Թագուհոյն քրիստոնէ ըլ- լալը	34
ԳԼ.	Զ.	Վեհանձնական դիտաւորու- թիւն	37
ԳԼ.	Է.	Թագաւորին հասնիլը	42
ԳԼ.	Ը.	Երկու բանտարկեալները	47
ԳԼ.	Թ.	Հրաշալի բժշկութիւն	57
ԳԼ.	Ժ.	Հաւատք բարեգործութիւն	63
ԳԼ.	ԺԱ.	Մարտիրոսութիւն	70



weg. 30 m

101

Finger. 1859th.

Aug 28 1859

Aug

